ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/303

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«ԷՄԳԱ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա. Հունանյանի (լիազորագիր տրված՝ 15.11.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.11.2021թ. թիվ 26/26-1/18133-2021 գրությամբ «ԷՄԳԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 29.10.2021թ. թիվ 1/18-2/69226-2021 գրության հիման վրա, 05.11.2021թ. թիվ 26/26-1/18133-2021 գրությամբ նախաձեռնել է «ԷՄԳԱ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ԷՄԳԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ԷՄԳԱ» ՍՊԸ-ն, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 16.11.2021թ. գրությամբ, հայտնել է հետևյալը.

«ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից հայտարարված ՀՀ ՊԵԿ- ԷԱՃԱՊՁԲ-2021/24 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ԷՄԳԱ» ՍՊԸ-ն 1-ին (Հրավերով սահմանված տեխնիկական բնութագիր՝ LED լամպ շրջանաձև սալիկ Տեսակը - ներդրվող լուսատու Հզորությունը - 25-30Վտ Լարումը 220Վ-240Վ միջակայքով աշխատող Լուսաշողի ջերմաստիճանը - 3500-4200Կ Արտաքին տրամագիծը-29-30սմ Երաշխիքային ժամկետը-365 օրացույցային օր: Այլ պայմաններ՝ ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է մատակարարը իր միջոցներով և իր հաշվին) և 2-րդ (Հրավերով սահմանված տեխնիկական բնութագիր՝ LED լամպ շրջանաձև սալիկ Տեսակը արտաքին տեղադրվող լուսատու Հզորությունը - 25-35Վտ Լարումը 220Վ-240Վ միջակայքով աշխատող Լուսաշողի ջերմաստիճանը - 3500-4200Կ Արտաքին տրամագիծը-29-30սմ Երաշխիքային ժամկետը-365 օրացույցային օր: Այլ պայմաններ՝ ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է մատակարարը իր միջոցներով և իր հաշվին) չափաբաժինների մասով ճանաչվել էր որպես ընտրված մասնակից:

«ԷՄԳԱ» ՍՊԸ կողմից տեխնիկական բնութագիրը հայտով ներկայացվել էր.

1-ին չափաբաժնի համար՝ LED լամպ շրջանաձև սալիկ Տեսակը -ներդրվող լուսատու Հզորությունը - 30Վտ Լարումը 220-240վ միջակայքով աշխատող Լուսաշողի ջերմաստիճանը - 4100Կ Արտաքին տրամագիծը -29սմ Երաշխիքային ժամկետը - 365 օրացույցային օր: Այլ պայմաններ՝ ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է մատակարարը իր միջոցներով և իր հաշվին, 2-րդ չափաբաժնի համար՝ LED լամպ շրջանաձև սալիկ Տեսակը -արտաքին տեղադրվող լուսատու Հզորությունը - 30Վտ Լարումը 220-240վ միջակայքով աշխատող Լուսաշողի ջերմաստիճանը 4100Կ Արտաքին տրամագիծը -29սմ Երաշխիքային ժամկետը-365 օրացույցային օր: Այլ պայմաններ՝ ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքի

տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է մատակարարը իր միջոցներով և իր հաշվին:

Սակայն, նախատեսված ապրանքները մատակարարելու նպատակով «ԷՄԳԱ» ՍՊԸ-ի կողմից կազմակերպած ներմուծումից հետո պարզվել է, որ 1-ին չափաբաժնի իրական արտաքին տրամագիծը 29,5 սմ. է, իսկ 2-րդ չափաբաժնինը՝ 28,7 սմ.:

2021 թվականի հոկտեմբերի 11-ին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից «ԷՄԳԱ» ՍՊԸ-ին ներկայացվել էր պայմանագիր կնքելու առաջարկ:

Մինչ ներկայացված պայմանագրի կնքումը «ԷՄԳԱ» ՍՊԸ կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտե էր ներկայացվել 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով մատակարարվելիք ապրանքների նմուշները:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից բանավոր պարզաբանվել է, որ ներկայացված նմուշների տրամագծերը չեն համապատասխանում հայտով ներկայացված տեխնիկական բնութագրերին՝ այդ պատճառով ապրանքները չեն կարող ընդունվել:

Վերոգրյալով պայմանավորված՝ «ԷՄԳԱ» ՍՊԸ-ն 2021 թվականի հոկտեմբերի 25-ին գրությամբ (կցվում է) դիմել էր ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ գնման պայմանագիր կնքելու և նշված ապրանքներն ընդունելու վերաբերյալ դիրքորոշում ստանալու նպատակով:

«ԷՄԳԱ» ՍՊԸ կողմից սահմանված ժամկետում պայմանագիր չկնքելը պայմանավորված է եղել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի բնականոն գործունեությունը չխաթարելու հանգամանքով, քանի որ, գնման ընթացակարգը հնարավոր էր չկայացած հայտարարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն: Հակառակ դեպքում նշված ապրանքների՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից չընդունվելու պարագայում պայմանագրի կնքումը խոչընդոտ կհանդիսանար ընթացակարգը չկայացած հայտարարելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ ապրանքների տեխնիկական բնութագրերի շեղումն աննշան է և ոչ էական, ինչպես նաև այն, որ առաջին չափաբաժնի մասով ամբողջությամբ համապատասխանում է հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին՝ խնդրում եմ «ԷՄԳԱ» ՍՊԸ-ին չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների» ցուցակում և հնարավորություն ընձեռել՝ կնքելու 1-ին և (կամ) 2-րդ չափաբաժիններով գնման պայմանագիրը:

Միաժամանակ հարկ եմ համարում նշել, որ երկու չափաբաժինների մասով ներկայացված ապրանքների հիմնական հատկանիշները, այն է՝ հզորությունը, լարումը և լուսաշողի ջերմաստիճանը համապատասխանում են հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և մեր կողմից ներկայացված հայտին»:

«ԷՄԳԱ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/303 ընթացակարգի շրջանակներում 17.11.2021թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 29.10.2021թ. թիվ 1/18-2/69226-2021 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից հայտարարված ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2021/24 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ԷՄԳԱ» ՍՊԸ-ն 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ճանաչվել էր որպես ընտրված մասնակից:

11.10.2021թ-ին «ԷՄԳԱ» ՍՊԸ-ն 1-ին վերջինիս ներկայացվել էր պայմանագիր կնքելու առաջարկ, սակայն սահմանված ժամկետում վերջինս չի ներկայացրել որակավորման և պայմանագրերի ապահովումները, ինչպես նաև իր կողմից ստորագրված պայմանագիրը չի ներբեռնել համակարգ, որի հետևանքով զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Հիմք ընդունելով կարգի 45-րդ կետի պահանջները՝ «ԷՄԳԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար Ձեզ եմ ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/303 ընթացակարգի շրջանակներում 17.11.2021թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/303 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/303 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2021/24» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԷՄԳԱ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.09.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «ԷՄԳԱ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը eauction.armeps.am համակարգի միջոցով 11.10.2021թ. ծանուցել է «ԷՄԳԱ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.10.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ 11.10.2021թ. «ԷՄԳԱ» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, սակայն վերջինիս կողմից ստորագրված պայմանագիրը չի ներբեռնվել համակարգ, ինչպես նաև չի ներկայացվել որակավորման և պայմանագրի ապահովումները, արդյունքում արձանագրել, որ Ընթացակարգի հրավերի 9.3 կետի համաձայն Ընկերությունը զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

5. **<u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 05.11.2021թ. թիվ 26/26-1/18133-2021 գրությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 29.10.2021թ. թիվ 1/18-2/69226-2021 գրությունը և կից փաստաթղթերը, ինչպես նաև «ԷՄԳԱ» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,</u>

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Որակավորման ապահովում չի ներկայացվում, եթե ընտրված մասնակիցը կամ տվյալ ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերպությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor's) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով: Եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը՝

- չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի տասնհինգ, իսկ գերազանցելու դեպքում՝ երեսուն տոկոսին.

- չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, բացառությամբ շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների, որոնց դեպքում ապահովումը ներկայացվում է սույն պարբերությամբ նախատեսված երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով.

- գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքների կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ***ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում սպանձնված պարտավորության խախտում:***

Այսպես, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2021/24» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԷՄԳԱ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.09.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «ԷՄԳԱ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը eauction.armeps.am համակարգի միջոցով 11.10.2021թ. ծանուցել է «ԷՄԳԱ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.10.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ 11.10.2021թ. «ԷՄԳԱ» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, սակայն վերջինիս կողմից ստորագրված պայմանագիրը չի ներբեռնվել համակարգ, ինչպես նաև չի ներկայացվել որակավորման և պայմանագրի ապահովումները, արդյունքում արձանագրել, որ Ընթացակարգի հրավերի 9.3 կետի համաձայն Ընկերությունը զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 9-րդ կետի 9.2-րդ և 9.3-րդ ենթակետերի համաձայն՝

9.2 Սույն հրավերի 1-ին մասի 8.25 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցին է ներկայացնում պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Ընդ որում պայմանագրում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով՝ համակարգի միջոցով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

9.3 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***<u>եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:</u>***

Այսինքն՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանվում են հստակ ժամկետներ պայմանագիրը ստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացնելու համար, որոնք չպահպանելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ հիմք ընդունելով Ընկերության դիրքորոշումը և ուսումնասիրելով Պատվիրատուի կողմից սույն ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա փաստական հանգամանքների հետ՝ գտնում եմ, որ «ԷՄԳԱ» ՍՊԸ-ն հրաժարվել է «ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2021/24» ծածկագրով պայմանագիրը կնքելուց և թույլ տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը, ինչպես նաև Պատվիրատուին չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Անդրադառնալով Ընկերության կողմից դիրքորոշմամբ վկայակոչված այն հանգամանքին, որ Ընկերության կողմից երկու չափաբաժինների մասով ներկայացված ապրանքների հիմնական հատկանիշները, այն է՝ հզորությունը, լարումը և լուսաշողի ջերմաստիճանը համապատասխանում են հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և Ընկերության կողմից ներկայացված հայտին, հարկ եմ համարում արձանագրել, որ սույն ընթացակարգի նախաձեռման համար հիմք է հանդիսացել ոչ թե Ընկերության կողմից ներկայացված և Ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի անհամապատասխանությունը, այլև այն փաստական հանգամանքը, որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել Պատվիրատուին:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից դիրքորոշմամբ հայտնած հետևյալ խնդրանքին. «*Հնարավորություն ընձեռել կնքելու 1-ին և 2-րդ չափաբաժիններով գնման պայմանագիր*», ապա հարկ եմ համարում արձանագրել, որ նման խնդրանքը սույն ընթացակարգի շրջանակներում անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ Գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի [հետ]՝ առանց վճարի: ***Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:***

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Այսպիսով՝ վերը նշված իրավակարգավորումների համաձայն՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգի շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավասու է ընդունելու որոշում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.11.2021թ. թիվ 26/26-1/18133-2021 գրությամբ «ԷՄԳԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ԷՄԳԱ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**